

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Կ-198-04.12.2017-SՀ-011/0) վերաբերյալ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Ած պատգամավոր Գագիկ Մելիքյան		Նախագիծը լրամշակվել է:	Ընդունվել է: Նախագիծը լրամշակվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 1-ին	Օրենքի նախագծի 1-ին հոդվածն (նոր խմբագրությամբ՝ 2-րդ հոդված) անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2012թ. Ապրիլի 5-ի «իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշման 281-րդ եւ 300-րդ կետերի պահանջներին:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 3-րդ	Հաշվի առնելով, որ «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում որպես հատուկ նյութեր, սարքավորումներ, տեխնոլոգիաներ են սահմանված միջուկային զենքի արտադրության համար պիտանի նյութերը, սարքավորումները, տեխնոլոգիաները եւ վերջիններիս հետ ցանկացած գործունեություն կարգավորվում է «Երկակի նշանակության ապրանքների արտահանման, Հայաստանի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրման, ինչպես նաեւ երկակի նշանակության տղեկատվության եւ	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			մտավոր գործունեության արդյունքների փոխանցման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքով եւ դրանից բխող ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի N 1785-Ն որոշմամբ, որով ՀՀ կառավարությունը հաստատել է վերոհիշյալ հատուկ նյութերի, սարքավորումների, տեխնոլոգիաների ցանկը, որպես երկակի նշանակության ապրանքների առաջարկվում է օրենքի նախագծի ամբողջ տեքստից հանել «հատուկ նյութեր, սարքավորումներ, տեխնոլոգիաներ» բառերը:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված, 1-ին մաս 2-րդ	Առաջարկության հիման վրա նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը խնբագրվել է	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	ՀՀ կառավարություն	Օրենքի հոդված, 1-ին մաս, երկրորդ պարբերություն 19.1-րդ	Առաջարկվում է «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» ՀՀ օրենքի 19.1 հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության» բառերով:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
6.	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 7-րդ	Նախագծի 7-րդ հոդվածը ներկայացնել հետեւյալ խմբագրությամբ՝ «Հոդված 7. Օրենքի 19.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Միջուկային տեղակայանքները շահագործումից հանելու ֆինանսական միջոցները կուտակվում են ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացված հատուկ հաշվին»:	Առաջարկությունն ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: